Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2763

26
S-36

2001

26
Տ-36 կր.

# ՏԵՏՐԱԿ

## ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԱՓՕՐԱՑ

## ՍՐԲՈՅ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ՏԱՃԱՐԻՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1879

23011

Զաղօթս մեր տացուք քեզ Տէր, 'ի գաւիթս քո
'ի մէջ նոր Երուսաղէմի։ Շնորհալի։

ՀՍԽՀ-ССР
А. Мясник...
4907
38




Ճշմարտապէս խաչելոյ Թեամբ,
Անպարտականդ՝ ինձ սոր մեծ.
Մածմամբ մարմնոյդ 'ի փայտ Խաչին,
Սուրբ բեւեռօքն 'ի յիս գը Թամ։

# ԿԱՆՈՆ

## ՈՒՐԲԱԹ ԱՒՈՒՐ

Ցիններրորդ ժամու գումարին Եկեղեցականք առաջի սեղանի դրան Տեառն։ Առնու շուրջառ միայն Թափօրապետն, և 'ի յետս Թափօրականաց մոմ լուսաւորեալ, իսկ նախասարկաւագն զգեցեալ շապիկ և սաղաւարտ 'ի գլուխ և բուրվառ 'ի ձեռին, ասէ 'ի ձայն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ կեցո՛.

Արկանէ Թափօրապետն խունկ. եւ ասէ՝

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ գնան ըստ կարգ 'ի սուրբ Բեմն, ասելով՝ Շարական.

ԲՁ. Արծաթասիրութեամբն մոլեալ Յուդայ, զՏէր ըզմեծ ըզվարդապետն ընդ երեսուն արծաթոյ Հրէիցն մատնէր։
Ընդ որում ես համբուրեցից ասէ՝ ըզնա կալարուք. ով համբոյր նենգութեան, նշան և առիթ մահու։
Մերկացաւ յինքենէ զԱստուածայինն ըզ Հոգին. և ըզգեցաւ ըզսատանայ, որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ։

Սարկաւագն. Որթի։

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա″.

Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նոցա։
Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին. Բարձ զդա, և արձակեա մեզ զԲարաբբա, որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին և ըսպանութեան մտեալ 'ի բանտ։
Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսիլ, քանզի կամէր արձակել զՅիսուս։
Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին. Ի խաչ հան զդա։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք″.

Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ո″.

Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագանեն զօրք հրեշտակաց. զի դու միայն ունիս զանմահութիւն բնակեալդ 'ի լոյս անմատոյց։ Եւ մեք հողեղէնս արարածքս խոնարհեալք երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։ Եւ ընդ երկնային զօրուն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս՝ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յա″.



Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն″.

Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ″.

Եւ անդ երգեն 'ի գեղջին՝ ուր զհանդերձն Քրիստոսի բաժանեցին։

ԴԿ. Զա°հըն լուսոյ յառաւօտին՝ 'ի յուրբաթու հընոյ զատկին, կայր առաջի դատաւորին՝ ծառայն նըստէր 'ի յատենին. 'ի հարցանէլ Պիղատոսի՝ Տէրն ոչ առնէր պատասխանի. զի կանխասաց գիրըն լցցի, եղէ ես մարդ որ ոչ խօսի։

Սարկաւագն. Որթի։

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա″.

Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն բաժանման հանդերձից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իսկ զինուորքն իբրեւ հանին 'ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա և արարին

չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասըն. իսկ զպատմուճանն, քանզի էր առանց կարանի 'ի վերուստ փոր անկեալ ամենեւին, ասեն ցմիմեանս. Մի պատառեսցուք զայդ. այլ արկցուք վիճակս 'ի վերայ դորա՝ ում և ելցէ. Զի լցցի գիրն՝ որ ասէ. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին:

Զինուորքն զայս ինչ գործեցին:

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք".
Թափօրականքն. Կեցո Տէր: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա". Տէ. յէրէ. 6:

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ անտի իջանեն 'ի Խաչ գիւտն. ասելով

ԱՋ. Հրաշալի՜ է և զօրեղ փա՛յտ խաչի՛ քո Քրիստո՛ս գաւազա՛ն զօրութեա՛ն 'ի յերկրի՛ երեւեալ. եկա՛յք ժողովուրդք երկիրպագեսցուք:

Զոր Հրէի՜յքն ծածկեալ զանթաքչելի՜ ընդգանձըն, փափագմամբ Թագուհւո՛յն փայտ կենա՛ց յա՛յտնեցաւ. եկա՜յք:



Սա է զէ՜ն յաղթութեա՛ն հաւատացելո՛ց. ախոյեա՛ն և կնիք յա՛ղթող ընդդէմ թըշնամւոյն. եկա՛յք:

Սարկաւագն. Որթի:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիրպագութիւն լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի:
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ: Ասէ Աստուած:

Թափօրապետն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից և երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ:

Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք:

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից և զօրութիւնք երկնից շարժեսցին:

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւս".
Թափօրականքն. Կեցո Տէր: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր՝ պահպանեա զմեզ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան. փրկեա

յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ զմեզ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն''.
Թափօրապետն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ''.

Եւ ապա ելանեն ՚ի սուրբ Լուսաւորչի Եկեղեցին. ասելով

ԴԿ. Մարգարէից գերագոյն եւ մեծ ՚ի ծընընդըս կանանց. որ ըզտնօրէնութիւն աստուածորդւոյն ՚ի յորդանանի ծանեար հոգւովն. աղաչեա՛ զԱստուած վասն մանկանց եկեղեցւոյ։

Յորովայնէ յորովայն երկրպագող Քրիստոսի. որ ըղձալին Աստուած մերով բնութեամբ մկրտեցեր ՚ի Յորդանան. աղաչեա՛ զԱստուած։

Կատարումն օրինաց եւ նախասկիզբն շնորհաց. որ հոգւովն ՚ի դժոխս քարոզեցեր զփըրկութիւն գալստեամբն Քրիստոսի. աղաչեա՛ զԱստուած։

(Այս Աւետարանս ընթերցանի հանդէպ Սուրբ Կարապետի Սեղանոյն)։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութե՛ լուա''.



Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Թափօրապետն. Մկրտիչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր առ նա, եւ ասէ. Ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

Սա է՝ վասն որոյ ես ասէի, զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղեւ, զի յառաջ իսկ էր քան զիս։

Եւ ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի լինիցի Իսրայելի՝ վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել։

Վկայեաց Յովհաննէս՝ եւ ասէ, թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից, եւ հանգչէր ՚ի վերայ նորա։

Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս. Յոր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի ՚ի վերայ նորա, նա է՝ որ մկրտէ Հոգւովն Սրբով։

Եւ ես՝ տեսի, եւ վկայեցի՝ եթէ սա է Որդին Աստուծոյ։

Սարկաւագն. Սուրբ Ճգնաւորքն աղաչեսցուք զՏէր, որք զնորին պարանեցին 'նե".

Թախորապետն. Որ ընտրեցեր և ընկալար զերա-նելի և զերջանիկ զմաքուր տատրակն անա-պատի՝ զսուրբ Կարապետն և զՄկրտիչն քո զՅօհաննէս Քրիստոս Աստուած մեր, եւ հաղորդս արարեր զնա կամաւոր չարչա-րանաց քոց։

Ա՛րդ՝ բարեխօս առ քեզ ունիմք. որք աստ և ընդ ամենայն տիեզերս սուրբք կցեն.

Որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսու-թեամբն՝ խաղաղասցուսցես զկենցաղավա-րութիւնս մեր. փրկելով յերեւելի և յա-ներեւոյթ թշնամւոյն։

Շնորհեա՛ մեզ Տէր ըստ օրինակի նոցին կեալ. և զվախճանն մեր կնքեա՛ ուղղափառ խոստովանութեամբ 'ի յոյս կենացն յաւի-տենից. զի և մեք արժանի եղիցուք մտա-նել յերկնային խորանն լուսոյ՝ և ժառան-գել զպատրաստեալն 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ։

Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորես-ցուք զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։



Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թախորապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ ապա գնան 'ի տեղին՝ ուր է Սիւնն. յոր կապեցին զՔրիստոս 'ի տանն Պիղատոսի. ասելով՝

ԴԶ. Այսօր 'ի կատարումն աստուածային ընթրեաց նոր ուխտի Ճշմարտութեան քո 'ի վերնատունն խորհրդոյ տարամեր-ժեալ Յուդաս 'ի հօտէն փրկու. ուստի և զգառն Աստուծոյ դիմեալ կամաւ 'ի մահ խաչին առ 'ի բառնալ զմեղս աշխար-հի. վասն որոյ խնայեա՛ 'ի մեզ Քրիստոս կամաւոր քո չարչարանօք։

Այսօր զոր յերկնային լուսեղինացն ա-հիւ պատուեալ բանդ Աստուած, նման-մացեալ դասք Եբրայեցւոցն զիմանալի լոյսդ 'ի գիշերին ջահիւք և սուսերօք եկեալ ըմ-բռնել զանըմբռնելիդ. վասն որոյ եր-կրպագեմք անճառելի քո խոնարհու-թեանդ։

Սարկաւագն. Որթի։
Թախորապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թախորականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա",
Թախորապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։
Թախորականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն նախատանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ զինուորացն արարեալ պսակ 'ի փշոց՝ եդին 'ի գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի. և գային առ նա և ասէին. Ո՛ղջ եր, արքայ Հրէից. և հանէին նմա ապտակս ։

Եւ դարձեալ Պիղատոս արտաքս ել և ասէ ցնոսա. Ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս ինչ 'ի նմա ոչ գտանեմ ։

Ել Յիսուս արտաքս, և ունէր պսակ 'ի փշոց և հանդերձ ծիրանի ։

Եւ ասէ ցնոսա. Ահա՛ այրդ ցձեզ ։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք"։
Թափօրականքն. Կեցո՛ Տէր ։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո"։
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա"։ Տէ. յէրէ. 6 ։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ անտի ելանեն 'ի սուրբ Գողգոթայ. ասելով

դկ. Ի յուրբաթու ժամ երրորդին բեւեռեցար Տէր 'ի խաչին. լուծեր զկապանս



նախաստեղծին, և կապեցեր ըզթըշնամին. զնա ամրացա ընդ հովաննեաւ կենդանարար քո նըշանին. և 'ի ծագելն յարեւելից լուսաւորեա լուսով նորին ։

Իրանեալ աւազակին բացեր ըզդուռն Ադին դրախտին. ըստ հաւատոյ սրտի նորին կատարեցեր ըզխընդրելին. տուր և ինձ Տէր ընդ նըմին լսել ըզնոյն պատասխանին. այսօր ընդ իս իցես յԱդին, 'ի հայրենիս քո առաջին ։

Սարկաւագն. Որթի ։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն ։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիւղածութբ լուա"։
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու ։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր ։ Պռօսխումէ ։
Ասէ Աստուած ։

Թափօրապետն. Վասն Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր 'ի տեղին՝ որ անուանէր Գագաթան, եւ կոչէր Եբրայեցերէն Գողգոթա. ուր և 'ի խաչն իսկ հանին զնա, և ընդ նմա երկուս եւս այլս աստի և անտի, և 'ի մէջ զՅիսուս ։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ 'ի

վերայ խաչին. և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից։

Զայն տախտակ ընթերցան բազումք 'ի Հրէից, զի մօտ էր 'ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն՝ Դաղմատերէն և Յունարէն։

Եւ ապա 'ի ծունկս անկեալ ասեն՝ զՍուրբ Աստուածն, Երկցատանց Փառաւորեալն. և զկնի Սբ Աստուածին՝ Տէր ողորմեա, եւս 'ի ծունկս։

Ճշմարտապէս խաչելութեամբ,
Անպարտականդ ինձ ողորմեա.
Մածմամբ մարմնոյդ 'ի փայտ Խաչին,
Սուրբ բեւեռօքն 'ի յիս գթա։
Մեք 'ի յայն փայտն եմք յուսացեալ,
Յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ.
Եւ խոնարհեալ երկրպագեմք,
Աստուածընկալ սուրբ Նշանին։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւս"։
Թափօրականքն. Կեցո Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո"։

Թափօրապետն. Առաջի պատուական ամենայաղթ Խաչի քո անկանիմք երկրպագելով. և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։

Եւ այժմ վասն սորա Աստուածային քո Նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։



Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ անտի էջանեն 'ի սուրբ Պատանատեղն. ասելով

ԲՋ. Պարգեւատուն ամենեցուն այսօր խընդրի պարգեւս 'ի Պիղատոսէ. և արկողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ 'ի Յովսեփայ։

Կենդանատուն ամենեցուն այսօր դընի 'ի նոր գերեզմանի. և զանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայից։

Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր եդաւ 'ի նորափոր վիմի. զոր օրհնեն զօրք Երկնից երգով, պահպանի 'ի զինուորաց։

4907
38

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիրպագութիւ լուա"։
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ որ Յարեմաթեայ էր, աշակերտ Յիսուսի 'ի ծածուկ վասն ահին Հրէից, զի բարձ-

ցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պի֊
ղատոս. եկն և եբարձ զնա։
Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յի֊
սուս՝ 'ի գիշերի զառաջինն, և եբեր զը֊
մուռս խառն ընդ հալուէս՝ իբրեւ լտերս
հարիւր։
Առին զմարմինն Յիսուսի, եւ պատեցին
կտաւովք՝ խնկովք հանդերձ, որպէս օրէն
էր Հրէից պատել։
Եւ էր 'ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պար֊
տէզ, և 'ի պարտիզի անդ գերեզման նոր,
յորում ոչ ո՛ք երբէք էր եդեալ։
Անդ վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր
գերեզմանն, եդին զՅիսուս։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք″.
Թափօրականքն. Կեցո Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո″.
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի Թաղմանդ Քրիս֊
տոս Աստուած մեր՝ երկրպագեմ″. Տէս յերես 6։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն″.
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ″.

Եւ անդի երթան 'ի Սուրբ Գերեզմանն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի. ասելով՝

Ա.Կ. Առաքեցար 'ի Հօրէ բա՛նդ Աստուած
'ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք
ըզքեզ սուրբ Աստուած։



Ի գերեզման իջեր Թագաւոր անմահ եւ
'ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզքեզ։
Ի յերրորդ աւուր յարեար աստուածա֊
պէս և 'ի յերկինս համբարձար. փառք
յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ։

(Այս Աւետարանս երգեցի 'ի ներքս 'ի Սուրբ Գերեզմանն
ընթերցանի. և երգեցի առաջի դրան նորա)։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկրպագութիւն լուա″.
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ
ըստ Յովհաննու։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն։ Վասն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։

Բայց Մարիամ կայր արտաքոյ Գերեզմանին
և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի
գերեզմանն, և տեսանէ երկուս Հրեշտա֊
կըս, զի նստէին՝ մի 'ի սնարից և մի յանո֊
տից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։
Եւ նոքա ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս։
Ասէ ցնոսա. Զի բարձին զՏէրն իմ 'ի գե֊
րեզմանէ աստի, եւ ո՛չ գիտեմ ուր եդին
զնա։

Զայս իբրեւ ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր, եւ ոչ գիտէր թէ Յիսուս իցէ։

Ասէ ցնա Յիսուս. Կի՛ն դու, զի՞ լաս, զո՞ խնդրես. Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. Տէ՛ր, եթէ դու բարձեր զնա, ասա՛ ինձ ուր եդեր զնա, զի ես առից զնա։

Ասէ ցնա Յիսուս. Մա՛րիամ։

Եւ նա դարձաւ և ասէ ցնա Եբրայեցերէն. Ռա՛բբունի. որ թարգմանի՝ վարդապետ։

Թափօրականք. Տէր ողորմեա՛. և Երգ,

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց,
Լոյս ծագեցաւ արարածոց.
Սուրբ Յարութեամբ քո կենարար,
Յարո՛ և զմեզ 'ի կեանս անմահ։
Գերեզմանիդ քո համբուրման,
Գողգոթայիդ տեղւոյն զենման.
Սուրբ Յարութեան քո կենարար,
Արա՛ արժան զամենեսեան։

Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութբ 'ի Տեա".
Թափօրականք. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Քու՛մ ամենազօր և հրաշալի Յարութեանդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա". Տէ. յերե. 6։



Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ ապա շուրջ գալով զԳերեզմանաւ Տեառն. և գան 'ի վէմն Ջեր 'ի Յուժամթափման տեղին Սրբուհւոյ Աստուածածնին. ասելով՝

Սէ՛րըդ սիրո՛վ խոնարհեցա՛ր, 'ի փրկութիւն մեր մա՛րմնացար. նովի՛ն մարմնո՛վըն խա՛չեցար, 'ի գերեզման մահո՛ւ եդար. ա՛յսօր յարեա՛ր Աստուածաբա՛ր, 'ի հրեշտակաց քարոզեցար. Ե՛կայք փրկեա՛լք ընդ զուարթնո՛ցն տուք օրհնո՛ւթիւն յարուցելո՛յն։

Ե՛րեւեցա՛ր խունկաբերի՛ցն յողջոյն կենացըն ա՛ւրախալից. և 'ի լերի՛նըն Գալիլեայ Առա՛քելոց մետասանից. արժանացո՛ զմեզ ընդ նոսի՛ն զքեզ տեսանել յօրըն վերջին. Ե՛կայք փրկեա՛լք ընդ։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականք. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յոհաննու։
Թափօրականք. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրայեփն. Ի ժամ Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէոփայ, և Մարիամ Մագդաղենացի։

Յիսուս իբրեւ ետես զմայրն և զաշակերտըն զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կի՛ն դու, ահա՛ որդի քո։

Ապա ասէ ցաշակերտն. Ահա՛ մայր քո։

Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն ըզնա առ իւր։

Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է. զի կատարեսցի գիրն, ասէ. Ծարաւի եմ։

Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. եւ նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բերան նորա։

Իբրեւ էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. Ամենայն ինչ կատարեալ է։

Եւ խոնարհեցուցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին։

Սարկաւագն. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր".

Թափօրականին. Կեցո՛ Տէր, Տէր ողորմեա՛, Տէր ո".



Թափօրայեփն. Ընկալ Տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, և աղաչանօք ամենայն Սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ։ Լո՛ւր մեզ Տէր, և ողորմեա. ներեա քաւեա և թող զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր. որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Օրհնեա՛լք եղերուք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն։



Որ պատեցար սուրբ կըտաւովք,
Եդար 'ի նոր գերեզմա նըն.
Զիս մի՛ թողուր նըման լի նել,
Որք իջանեն 'ի գուբ ներ քին:

# ԿԱՆՈՆ

## ՇԱԲԱԹ ԱԻՈՒՐ

Յիններրորդ ժամու գումարին Ննջեցելոցն առաջի սեղանոյն դրան Տեառն:
Աւետարան ընթերցեալ միայն թափօրապետն, և 'ի յետոյ թափօրականաց մոմ լուսաւորեալ, իւր նախապատրաստագն զգեցեալ շուրջ և առաջնորդ
'ի գլուխ և բոլորեալ 'ի յետոյն, ասէ 'ի յայն·

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ կեցո".*

Արկանէ թափօրապետն խունկ· եւ ասէ՝

*Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,*
*այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ գնան շուրջ շուրջ 'ի սուրբ Բանսն, ասելով Շարականն.

ԲՁ. *Ի՛ գիշերին յորում մատնէ՛ր Փրկիչըն մեր 'ի մա՜հ խաչի՛, եւ 'ի լեառըն Ձիթենեաց, աղօթելո՛վ զայս ասէ՛ր. Հա՛յր անցո՞ յինէ՛ն զբաժա՛կս:*

*Իսկ անօրէն աշակե՛րտին թողեալ ըզգո՜ւթ սիրոյ նորա՛, և փութա՛յր առ քահա՛նայսն. ասէր ի՛նձ զի՛նչ կամի՛ք տալ, զի մատնեցի՛ց ըզվա՛րդապետն:*

*Ժո՛ղովեա՛լ Հըրէ՛իցըն կըշռեցի՛ն արծաթ*

բազում, առեալ տարան առ Պիղատոս, ատեն 'ի խա՛չ հա՛ն 'ի խաչ, զի հայհոյի՛չ է օրինաց։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա՛"։
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն մատնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն և դպրօք՝ և ամենայն ատենանն՝ կապեցին զՅիսուս եւ տարան մատնեցին Պիղատոսի։

Եւ եհարց զնա Պիղատոս և ասէ. Դու՞ ես թագաւորն Հրէից։

Նա պատասխանի ետ նմա եւ ասէ. Դու ասես։

Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ոչ ինչ տայր պատասխանի։

Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա. Ոչի՞նչ տաս պատասխանի, տե՛ս քանի՞ ամբաստանեն զքէն։



Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք"։
Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո"։
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա"։ Տե. յէրե. 6։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ անդի երթան 'ի տեղին՝ ուր զհանդերձն Քրիստոսի բաժանեցին։

ԴԿ. Ռամկակա՞ն դասք զինուորացն արկին հանդերձ նախատանաց, այնմ որոյ զգեստն է լոյս փառաց իբրև զօթոյ զինքեամբ արկած. 'ի ծունր իջեալ կատակէին զգլուխն եղեգամբ հարկանէին. պըսակ 'ի փշոց բոլորէին ըզփուշ մեղացն բարձողին։

Ռոպէից արեգակնն ըզտիւն արար գիշերանման, զլուսաւորըն քօղ արկ մերկութեան զի մի՛ տեսցէ ա՛կն անարժան. 'ի մէջօրեայն նըսեմացաւ, յորժամ Ադամ մեղօք մեռաւ. 'ի յիններորդն 'ի լոյս դարձաւ, յորժամ մահուամբ մահըն լուծաւ,

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Հա՛յր, թո՛ղ դոցա՝ զի ո՛չ գիտեն զինչ գործեն։

Եւ 'ի բաժանել զհանդերձս նորա, արկին վիճակս. և կայր ժողովուրդն հայեցեալ։

Անգոսնէին զնա և իշխանքն հանդերձ նոքօք՝ եւ ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիստոսն որդի Աստուծոյ ընտրեալն։

Այպն առնէին զնա և զինուորքն. եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ, և ասէին. Եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա՛ զանձն քո։

Եւ էր գիր գրեալ 'ի վերայ նորա, Յունարէն և Դաղմատերէն և Եբրայեցերէն գրով, թէ սա՛ է արքայն Հրէից։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք".
Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Բուռն ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա". Տէ. յերե. 6։



Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ ապա իջանեն 'ի Խաչ գիւտն. ասելով

ԱՁ. Անճառելի՛ երեւո՛ւմն երեւեա՛լ Դրըշխոյի՛ն, Նըստելո՛վ յատենի յԵ՛րուսաղէմ խընդրե՛ր ըզպատուակա՛ն փայտ Խաչի՛ն, յոր ըզՄե՛սիայն բե՛ւեռեցի՛ն։

Մեծասա՛ստ հրամանա՛ւն ժողովեա՛լ Հըրէից, ցուցանելո՛վ նըմա ըզպատուակա՛ն փայտ Խաչին, յո՛ր ելեա՛լ բարձրացա՛ւ արարիչն ա՛րարածո՛ց։

Ընդ յայտնիլ սո՛ւրբ Խաչի՛ն 'ի տեղւոջըն սըրբութեա՛ն բո՛ւրմամբ անուշա՛հոտ խընկոց. և լըցա՛ն տիե՛զերըք մեծապէ՛ս պա՛րգեւօ՛ք։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն կենսատու նշանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ

յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, և տեսցեն զՈրդի մարդոյ ե-կեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք:

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչեւ 'ի ծագս նոցա:

Ի թզենւոյ անտի ուսարո՛ւք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերեւ-ւըն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն:

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւս".
Թափօրականն. Կեցո՛ Տէր: Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր՝ պահպանեա զմեզ ընդ հո". Տես յերես 9:

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ անտի ելանեն 'ի սուրբ Լուսաւորչի Եկեղեցին. ասեն՝

Դզ. Հրաշափա՛ռ Ա՛ստուած և՛ միշտ բա-րեխնամո՛ղ. որ յանաւէ՛ջ գիտութեամբ ըզ-փըրկութիւն Հայաստանեայց ըսկըզբնաւո-րեալ, 'ի պա՛րթեւակա՛ն մեղապա՛րտ ազ-գէն Լուսաւորիչ մե՛զ շնորհեցեր. վասն ո-



րո՛յ բարեխօսութեամբ սորա Փրկիչ կեցո ըզմեզ այժմ եւ 'ի քո՛ յահաւո՛ր գալըս-տեա՛նն:

Հրաշալի՛ զարմա՛նմամբ երանելի՛ն սուրբ Գրիգոր զանտանելի՛ ըզչարչարանս 'ի յա՛նձն էառ, և երի՛ւք հընգօք ամօք 'ի մէ՛ջ թու-նա՛ւորացըն բնակէ՛ր ա՛նդընդայի՛ն տանջա-նօ՛քն 'ի վիրա՛պին. վա՛սն որո՛յ բա:

Հրաշագո՛րծ քո բանիւդ և մեծ ողորմու-թեամբ, ելեա՛լ բըժըշկէր ըզհա՛րուածեալ-սըն 'ի դիւաբաղխ սաստիցն. երկրպագո՛ւս առնելո՛վ զամենեսեան սուրբ Երրորդու-թեանդ. վա՛սն որո՛յ բա:

(Այս Աւետարանս ընթերցանի հանդէպ Սուրբ Լուսաւորչի Սեղանոյն):

Սարկաւագն. Որթի:
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութբ լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:
Թափօրականն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ: Ասէ Աստուած:

Թափօրապետն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց:

Իսկ վարձկանն՝ որ ո՛չ է հովիւ, որոյ ո՛չ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի. և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ. քանզի վարձկան է, և չէ՛ փոյթ նմա վասն ոչխարացն։
Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն։
Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայրն. և զանձն իմ դնեմ 'ի վերայ ոչխարաց։
Նաեւ՝ այլ եւս ոչխարք են իմ, որ ո՛չ են յայսմ գաւթէ. և զայնս եւս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ։

Սարկաւագն. Սուրբ ճգնաւորքն աղաչեսցուք զՏէր, որք զչարն պարտեցին 'նե"։

Թափօրապետն. Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ զորբազան հայրն մեր զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն Քրիստոս Աստուած մեր, և հաղորդս արարեր զնա կամաւոր չարչարանաց քոց։
Ա՛րդ՝ բարեխօս առ քեզ ունիմք. որք աստ և ընդ ամենայն տիեզերս սուրբք իցեն.
Որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսութեամբն՝ խաղաղասցուսցես զկենցաղավարութիւնս մեր. փրկելով յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն։



Շնորհեա՛ մեզ Տէր ըստ օրինակի նոցին կեալ. և զվախճանն մեր կնքեա՛ ուղղափառ խոստովանութեամբ 'ի յոյս կենացն յաւիտենից. զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկնային խորանսն լուսոյ՝ և ժառանգել զպատրաստեալն 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ։
Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ անդի գնան 'ի տեղին՝ ուր է Սիւնն. յոր կապեցին զՔրիստոս 'ի տանն Պիղատոսի. ասելով՝

ԴՁ. Ա՛յսօր որ 'ի հրեղէ՛ն զօրաց երկնից միշտ փառաբանեա՛լ երկրպագիս բանդ, ա՛ղօթէի՛ր առ Հայր մարմնո՛վ, ընկալեա՛լ ընդ Հօր զքո՛ վա՛սն իմ զպարտամտանս, ուստի կամաւ կրելով զերկիւղ 'ի հրեշտակաց զօրանայիր զօրացուցիչդ երկնաւորաց եւ

երկրաւորաց. վասն որոյ խնայեա ՚ի մեզ Քրիստոս կամաւոր քո չարչարանօք։

Այսօր զոր Սերովբէքըն ծածկէին ըզդէմս յահէ փառաց Աստուածութեանդ. Իսկ կորստեան որդին Յուդաս ՚ի համբոյր մերձեալ նենգութեամբ նշանակ ետ աւուրն մահու անմահիդ. վասն որոյ երկրպագեմք անճառելի քո խոնարհութեանդ։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութեամբ լուա՛՛.
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն նախատանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ զինուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝ որ հրապարակն էր. և կոչեն միանգամայն զամենայն զգունդն. և զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր և ծիրանիս, եւ եդին ՚ի գլուխ նորա պսակ արարեալ ՚ի փշոց. եւ սկսան ողջոյն տալ նմա եւ ասել. Ողջ լեր, արքայդ Հրէից.



Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, և թքանէին ընդ երեսս, և ՚ի ծունր իջեալ երկիր պագանէին նմա։

Եւ իբրեւ կատակեցին զնա՝ մերկացուցին զքղամիդն և զծիրանիս, և զգեցուցին նմա զիւր հանդերձն, և ածին արտաքս զի ՚ի խաչ հանցեն զնա։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք՛՛.
Թափօրականքն. Կեցո Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո՛՛.
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա՛՛. Տես յերես 6։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն՛՛.
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ՛՛.

Եւ անտի ելանեն ՚ի սուրբ Գողգոթայ. ասելով

Դկ. Ստեղնեալ ծառոյ մահաբերին այնմ որ բուսաւ ՚ի մէջ դրախտին, փոխան բարձեր ըզփայտ խաչին, ՚ի Գողգոթայ հաներ տեղին. զիմ առ ՚ի մեղս անկեալ զոգի և ծանրագոյն բարձող բեռին, բարձ ՚ի յուսոյդ ըստ ոչխարին, հան ՚ի յերկինս յուխտեալ տեղին։

Յանմահիդ մեռանելոյ զմեռեալ հոգիս կենդանացո. Թաղմամբ ՚ի նոր գերեզմանի

զթաղեալս 'ի մեղս վերածեա. 'ի գբի ներքնումն իջանելով 'ի գբոյ մեղաց վերաբերեա. 'ի ստուեր մահու քո բնակելով լուսաւորեա և զիս հոգւով։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկրպագութի՜ լուսա″.
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իբրեւ չոքան 'ի տեղին՝ կոչեցեալ Գագաթըն, անդ հանին զնա 'ի խաչ. և զչարագործն՝ զոմն ընդ աջմէ և զոմն ընդ ձախմէ խաչեցին։

Եւ Յիսուս ասէ. Հայր, թող դոցա՝ զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։

Եւ 'ի բաժանել զհանդերձս նորա, արկին վիճակս. և կայր ժողովուրդն հայեցեալ։

Անգոսնէին զնա և իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիստոսն որդի Աստուծոյ ընտրեալն։



Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ, և ասէին. Եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա՛ զանձն քո։

Եւ էր գիր գրեալ 'ի վերայ նորա՝ Յունարէն և Դաղմատերէն և Եբրայեցերէն գրով, եթէ սա՛ է արքայն Հրէից։

Եւ ապա 'ի ծունկս անկեալ ասեն՝ զՍուրբ Աստուածն, երեքսրբեանց Փառաւորեալն. նշնի Սուրբ Աստուածին՝ Տէր ողորմեա, եւս 'ի ծունկս։

Գոլեալ ես դու Փայտ փրկութեան,
Ամենօրհնեալ յաղթող նշան.
Ի գիշերիս ստուերական,
Ծագեա՛ մեզ զլոյս արփիական։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւ″.
Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո″.

Թափօրապետն. Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով. և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոյ. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։

Եւ այժմ վասն սրբոյ Աստուածային քո նշանի՝ շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ".

Եւ ապա իջանեն 'ի սուրբ Պատմանատեղն. ասելով՝

ԲԶ. Կենդանին յաւիտենից Քրիստոս այսօր խնդրի որպէս մեռեալ 'ի Պիղատոսէ. և մերկութեան ծածկոյթն Ադամայ, յանձըն առնու պատել 'ի Յովսեփայ:

Անմահութեանց տուող Քրիստոս այսօր 'ի հող մահու խոնարհեցաւ. և բնակեալն 'ի լոյս անմատոյց թաղեցաւ մարմնով 'ի սիրտ երկրի:

Արեգակն արդարութեան Քրիստոս այսօր եղաւ 'ի գբի ստուերականի. և փառացն Հօր ճառագայթ ծածկեցաւ մարմնով 'ի մէջ երկրի:

Սարկաւագն. Որթի:
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութեամբ լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու:
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ: Ասէ Աստուած:

Թափօրապետն. Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ եւ արդար, սա



չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ ընդ գործս նոցա, յԱրեմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ:

Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի:

Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատանակաւ, և եդ 'ի կռածոյ գերեզմանի, ուր չէր բնաւ զոք եդեալ:

Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր:

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. խնդրեսցուք".
Թափօրականքն. Կեցո՛ Տէր: Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Քում՝ ամենազօր և հրաշալի թաղմանդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա". Տես յերես 6:

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ".

Եւ ապա երթան 'ի Սուրբ Գերեզմանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ասելով՝

ԱԿ. Յարուցեալ Տէրն 'ի գերեզմանէն միածինն որպէս փայլակն, և լոյս փառաց ծագեաց յաշխարհս եւ երկինք եւ երկիրս ցնծային:

Մեծ է յարութիւն Աստուածորդւոյն

քանզի դրո՛ւնք երկնից բացեա՛լ եղեն եւ հո՛տ անուշ բո՛ւրեաց յաշխարհս և լցոյց զա՛րարածս ամենայն ։

Զօրք երկնից իջեա՛լ էին եւ բանակեա՛լ շուրջ ըզգերե՛զմանաւն, և հոգեղէ՛ն բարբառո՛վ երգէին. Տէ՛ր օրհնեա՜լ է քո՛ յա՜րութիւնդ ։

(Այս Աւետարանս երբեմն 'ի ներքս 'ի Սուրբ Գերեզմանն ընթերցանի. և երբեմն առաջի դրան նորա) ։

Սարկաւագն. Որթի ։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն ։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիւղածութբ լուա"։
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի ։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր ։ Պռօսխումէ ։ Ասէ Աստուած ։

Թափօրապետն ։ Վասն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ իբրեւ էանց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակոբեայ և Սալոմէ` չոքան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն և օծցեն զնա ։

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արեւագալն, և ասէին ցմիմեանս, Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին ։



Եւ հայեցեալ տեսին` զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն . քանզի էր մեծ յոյժ ։

Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի` զի նստէր ընդ աջմէ կողմանէ` զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան ։

Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ` չէ՛ աստ. ահաւադիկ տեղին` ուր եդին զնա ։

Թափօրականքն. Տէր ողորմեա՛. և Երգ,

Միրոյ եղար եւ արտասուօք,
Ի տապանիդ` ինձ ողորմեա՛.
Վերաբերեմ քո Յարութեամբդ,
Զմարդիկ 'ի կեանս եւ յիս գըթա՛ ։

Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութբ 'ի Տեա".
Թափօրականքն. Կեցո՛ Տէր ։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի Յարութեանդ Քրիստոս Աստուած մեր` երկիրպագա". Տե՛ս յերես 6 ։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ ապա շուրջ գալով զԳերեզմանաւ Տեառն. և գան 'ի վիճակն Քր 'ի Յուղաթաղման տեղին Սրբուհւոյ Աստուածածնին. ասելով՝

Երևեցար խընկաբերիցն յողջոյն կենացըն ուրախալից. և 'ի լերին նըն Գալիլեայ Առաքելոց մետասանից. արժանացո զմեզ ընդ նոսին գ.քեզ տեսանել յօրըն վերջին. Եկայք փըրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սիովնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պըսակէ ըզքեզ փառօք և ըընդ առաջ պըճնեալ զարդուք. երգեա երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենաբերոյ պըսակողին:

Սարկաւագն. Որթի:

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն:

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութբ լուա″.

Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ: Ասէ Աստուած:

Թափօրապետն. Ի ժամանակի Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէովպայ,



և Մարիամ Մագդաղենացի:

Յիսուս իբրև ետես զմայրն և զաշակերտըն զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կին դու, ահա որդի քո:

Ապա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո: Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն ըզնա առ իւր:

Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ. Ծարաւի եմ:

Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բերան նորա:

Իբրև էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. Ամենայն ինչ կատարեալ է: Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին:

Սարկաւագն. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր″.

Թափօրականքն. Կեցո Տէր: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո″.

Թափօրապետն. Ընկալ Տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութբ սուրբ Աստուածածնին՝ անա″. Տես յէրես 23:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո″.

Օրհնեալ եղերուք 'ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթայք″.



Սիրով եդար եւ արտաս ուօք,
Ի տապանին՝ ինձ ողբ մեծ.
Վերաբերեալ քո Յարութեամբդ,
Զմարդիկ 'ի կեանս եւ յիս գթա՛։

# ԿԱՆՈՆ

## ԿԻՐԱԿԷ ԱՒՈՒՐ

Յետ երրորդ ժամու գումարին Եկեղեցականք առաջի սեղանոյ դրան Տեառն։ Աւագն շուրջառ մեծաւ թափորապետն, և 'ի յետոյ թափորականաց մոմ լուսաւորեալ, իսկ նախասարկաւագն զգեցեալ շապիկ և ուրարն 'ի գլուխ և բուրվառ 'ի ձեռին, ասէ 'ի ձայն.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ընկալ կեցո՛.

Արկանէ թափորապետն խունկ. Եւ ասէ՝

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,

այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ գնան շուրջ շուրջ 'ի սուրբ Խորանն, ասելով Շարական.

ԲՁ. Ո՛ր Թագաւորդ ես Թագաւորաց Քրիստոս, 'ի ծառայէ դատապարտեալ համբերելով վասն մեր. Երկայնամիտ Տէ՛ր քեզ փառք։

Ո՛ր պատուական խաչիւդ քո Քրիստոս և սուրբ Արեամբդ քո հեղմամբ կեցուցանել ըզմեզ կամեցար. Երկայնամիտ։

Ո՛ր մարդասիրապէս վասն ամենեցուն ամենայնի համբերեցեր, և 'ի մահու ըզմահ կոխեցեր. Երկայնամիտ։

Սարկաւագն· Որթի։
Թափօրապետն· Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն· Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութբ լուա"։
Թափօրապետն· Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։
Թափօրականքն· Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Թափօրապետն· Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին· եհարց ցնա դատաւորն՝ և ասէ· Դո՞ւ ես Թագաւորն Հրէից։
Եւ Յիսուս ասէ· Դու ասես։
Եւ ՚ի չարախօսիլն նորա ՚ի քահանայապետիցն և ՚ի ծերոց, ոչինչ ետ պատասխանի։
Յայնժամ ասէ ցնա Պիղատոս· Ո՞չ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն։
Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և ոչ բան մի, մինչև զարմանալ դատաւորին յոյժ։
Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեան կապեալ մի՝ զոր կամէին։
Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա։
Իբրև ժողովեցան, ասէ ցնոսա Պիղատոս· Զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից



ձեզ, զՅեսո՞ւ Բարաբբա՝ եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս։
Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա։

Սարկաւագն· Փառք քեզ Տէր Աստուած մեր· Խնդրեսցուք"։
Թափօրականքն· Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո"։
Թափօրապետն· Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագագ"։ Տես յէրես 6։

Սարկաւագն· Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն"։
Թափօրապետն· Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ"։

Եւ անդի երթան ՚ի տեղին՝ ուր զհանդերձն Քրիստոսի բաժանեցին։

Դկ· Վերնականքըն զարհուրեալ տեսին զՏէրըն մերկացեալ, և զհանդերձսըն բաժանեալ պատմուճանին վիճակ արկեալ· ընձեռսն և զոտսըն ծակեցին, ըստ յայտնապէս Դաւթեան ձայնին, ընդ փայտ խաչին բևեռեցին զմատունսն որ գրեաց ՚ի տախտակին։

Պատկառանօք հինն Ադամայ որ ձաղեցար վասն նորա, ջնջեա զամօթ մեղաց լորբին որով զերեսս իմ ծածկեցին· որ ներեցեր չար ծառային անել ձեռօք քեզ ապտակին· հար ուժգնակի զդէմս չարին որպէս և զիս եհար ուժգին։

Սարկաւագն. Որթի ։

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիւղածութեամբ լուա″.

Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի ։

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր ։ Պռօսխումէ ։ Ասէ Աստուած ։

Թափօրապետն. Վասն Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ հանեալ զնա 'ի խաչ, բաժանեցին ըզհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի մարգարէէն. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, եւ 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին ։

Եւ նստեալ պահէին զնա ։

Եւ եդին 'ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ ըզվնաս նորա, թէ՝ Այս է Յիսուս Թագաւորըն Հրէից ։

Յայնժամ հանին ընդ նմա 'ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ նորա՝ և մի յահեկէ ։

Եւ որ անցանէինն՝ հայհոյէին զնա, շարժէին զգլուխս իւրեանց, և ասէին. Վա՜հ, որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա. ապրեցո՛ զքեզ, եթէ Որդի ես Աստուծոյ՝ էջ 'ի խաչէդ ։



Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք″.

Թափօրականքն. Կեցո՛ Տէր ։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո″.

Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր՝ երկրպագա″. Տես յերես 6 ։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն″.

Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ″.

Եւ անտի իջանեն 'ի Խաչ գիւտն. ասելով

ԱՁ. Որ ըզնախնեացն անի՛ծ մահո՛ւ փա՛յտ կենա՛ց շնորհեցե՛ր, եւ ետո՛ւր յաղթութի՛ւն մահացու՛ բնութեանս. 'ի սմա՛ բանիւդ Հօ՛ր երկրպագեսցո՛ւք ։

Որ զանճառ լո՛ւսոյդ բարձողըն ծածկելո՛վ Հրէի՛ցն, 'ի յերկրէ՛ ծագեցե՛ր զերկնայի՛ն ճառագայթ. 'ի սմա՛ ։

Որ ահաւոր հրա՛շիւք ցուցե՛ր ըզնըշա՛ն խաչի քո՛, յայտնելո՛վ աշխարհի՛ յարութեամբ պատանւոյն. 'ի սմա՛ ։

Սարկաւագն. Որթի ։

Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն ։

Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիւղածութեամբ լուա″.

Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի ։

Թափօրապետն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Ի Թզենւոյ անտի ուսարո՛ւք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տե֊րեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն ։ Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջի՛ք թէ մերձ է ՚ի դուրս ։

Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ո՛չ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի ։

Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն ։

Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու, ո՛չ ո՛ք գիտէ, ո՛չ Հրեշտակք երկնից՝ և ո՛չ Որ֊դի, բայց միայն Հայր ։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւս″.
Թափօրակալնքն. Կեցո՛ Տէր ։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո″.
Թափօրապետն. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր՝ պահպանեա զմեզ ընդ հո″. Տես յերես 9 ։

---

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն″.
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ″.

Եւ ապա երգեն ՚ի սուրբ Լուսաւորչի Եկեղեցին. ասելով

ԴԿ. Որ յոլովայնէ ընտրեցար յԱստուծոյ



քարոզող ճըշմարիտ որդւոյն Աստուծոյ, Տէր Յովհաննէս. անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց ։

Որ յանապատէ կոչեցար ՚ի Տեառնէ մը֊կըրտել ըզբոլորից բարձողըն մեղաց, Տէր Յովհաննէս. անդադար բա ։

Որ զմարգարէից ընկալար ըզպատիւ եւ ըզշնորհըս ճըշմարիտ սուրբ Առաքելոցն, Տէր Յովհաննէս. անդադար բա ։

(Այս Աւետարանս ընթերցանի հանդէպ Սուրբ Կարապետի Սեղանոյն) ։

Սարկաւագն. Որթի ։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն ։
Թափօրակալնքն. Եւ ընդ հոգւոյդ քում ։ Երկիւղածութբ լուա″.
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու ։
Թափօրակալնքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր ։ Պռօսխումէ ։ Ասէ Աստուած ։

Թափօրապետն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի, և անդ շրջէր նոքօք հանդերձ և մկրտէր ։

Մկրտէր և Յովհաննէս ՚ի Յայենովն, մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազում էին անդ. և գային՝ և մկրտէին ։

Զի չեւ եւս էր արկեալ Յովհաննէս 'ի
բանտ։
Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհան-
նու ընդ Հրէից՝ վասն սրբութեան։
Եկին առ Յովհաննէս և ասեն ցնա. Ռաբբի,
որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու,
որում դուն վկայեցեր, ահաւանիկ նա մը-
կրտէ՝ և ամենեքին գան առ նա։
Պատասխանի ետ Յովհաննէս՝ և ասէ. Ո՛չ
կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ, ե-
թէ ո՛չ իցէ տուեալ նմա յերկնից 'ի վե-
րուստ։

Սարկաւագն. Սուրբ Ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր,
որք զչարսն պարտեցին նե".

Թափօրապետն. Որ ընտրեցեր և ընկալար զերա-
նելի և զերջանիկ զմաքուր տատրակն անա-
պատի՝ զսուրբ Կարապետն և զՄկրտիչն քո
զՅովհաննէս Քրիստոս Աստուած մեր, և
հաղորդս արարեր զնա կամաւոր չարչա-
րանաց քոց։
Ա՛րդ՝ բարեխօս առ քեզ ունիմք. որք աստ
և ընդ ամենայն տիեզերս սուրբք իցեն։
Որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսու-
թեամբն՝ խաղաղացուսցես զկենցաղավա-



րութիւնս մեր. փրկելով յերեւելի և յա-
ներեւոյթ թշնամւոյն։
Շնորհեա՛ մեզ Տէր ըստ օրինակի նոցին
կեալ. և զվախճանն մեր կնքեա՛ ուղղափառ
խոստովանութեամբ 'ի յոյս կենացն յաւի-
տենից. զի և մեք արժանի եղիցուք մտա-
նել յերկնային խորանսն լուսոյ՝ և ժառան-
գել զպատրաստեալն 'ի սկզբանէ աշխարհի
սրբոց քոց զարքայութիւնդ։
Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորես-
ցուք զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ".

Եւ անտի գնան 'ի տեղին՝ ուր է Սիւնն. յոր կապեցին զՔրիստոս
'ի տանն Պիղատոսի. ասելով՝

ԴՁ. Ա՛յսօր յառա՛ջ նշանակեալ հրամա-
նի՛ն քո՛ կատարի՛ւր յաշակերտա՛ց դասն.
քա՛նզի զհովի՛ւըդ քաջ հա՛րեալ ցրուե-
ցա՛ւ հօ՛տն ըստ մարգարէ՛ին. ո՛ր եւ կապե-
ցա՛ր անկապելի՛դ 'ի յԱննայէ՛ և 'ի Կայիա-
փայ դատապարտեալ. 'ի ծառայէ ա՛պտա-

կեցար և նախատանաց թուք կերպարա-
նօքդ Հօր ընկալար. վասն որոյ խնայեա՛ 'ի
մեզ Քրիստոս կամաւոր քո չարչարանօք։

Այսօր ընդ գերագոյն տնօրէնութիւ-
նդ քո որդի Աստուծոյ հոյլք անմարմ-
նոցըն հրաբուն սեռիցն պակուցեալ զարմա-
նային, տեսանելով զանտեսանելդ մատնեալ
կամաւ 'ի ձեռս մեղաւորաց. վասն որոյ եր-
կրպագեմք անճառելի քո խոնարհու-
թեանդ։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութ. լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։ Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն նախատանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ զինուորք դատաւորին առին ըզ-
Յիսուս յապարանս. և ժողովեցին 'ի վերայ
նորա զամենայն զգունդն. մերկացուցին
զնա, և արկին զնովաւ քղամիդ կարմիր. և
բոլորեալ պսակ 'ի փշոյ` եդին 'ի գլուխ նո-
րա, և եղէգն յաջոյ ձեռին նորա. 'ի ծունր



իջեալ առաջի նորա` կատակէին և ասէին.
Ողջ լեր, թագաւոր Հրէից։
Եւ թքեալ 'ի նա` առնուին զեղէգնն եւ
ծեծէին զգլուխ նորա։
Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկացուցին
'ի նմանէ զքղամիդն` եւ ագուցին նմա
զիւր հանդերձն, եւ տարան զնա 'ի խաչ
հանել։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք".
Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ Քրիստոս Աստուած մեր` երկիրպագա". Տե. յերե. 6։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ անտի երթեն 'ի սուրբ Գողգոթայ. ասելով

Դկ. Սոսկալին Սերովբէից բառնայր ին-
քեամբ զփայտ խաչին, մինչ 'ի տեղի Գող-
գոթային յորում եդեալ մարդն առաջին.
Ետուն ըմպել գինի զմռսեալ եւ կերա-
կուր լեղեաւ խառնեալ, որով զպտղոյն
դառըն ճաշակ փոխեաց մեզ քաղցր եւ
ախորժակ։
Քարոզէ 'ի սքանչելեացս Աստուած մար-

Մեռ՛վ վասն իմ խաչեալ, մերով բնութեամբ
բըս մեռանի, Աստուած ա՛նմահ խոստովա-
նի. կը՛րկնաւորտա՛նկ կողին ա՛ղբերբք Եկեղե-
ցի՛ իւր հաստատի. ջրովըն մաքրի, զարիւնն
ըմպէ. զորդի՛ ընդ Հօր փառաւորէ։

Սարկաւագն. Որթի։
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն։
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում։ Երկիւղածութ՟ լուա″.
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ
ըստ Մատթէոսի։
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր։ Պռօսխումէ։
Ասէ Աստուած։

Թափօրապետն. Վասն Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։

Զնոյն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ
նմա, նախատէին զնա։
Եւ 'ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղեւ 'ի
վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ։
Եւ զինն ժամաւն գոչեաց Յիսուս 'ի ձայն
մեծ և ասէ. Էլի, Էլի, լամա սաբաքթանի.
այսինքն է, Աստուած իմ, Աստուած իմ,
ընդէ՞ր թողեր զիս։
Ոմանք յանցանէ որ անդ կային, իբրեւ
լուան՝ ասէին. զԵղիա կարդայ դա։
Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն 'ի նո-



ցանէ, էառ սպունգ լի քացախով. և հա-
րեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։
Եւ կէսքն ասէին. Թո՛ղ տեսցուք եթէ գա՞յ
Եղիա փրկել զդա։
Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց 'ի ձայն
մեծ, և արձակեաց զոգին։

Եւ ապա 'ի ծունկս անկեալ ասեն՝ զՍուրբ Աստուածն, երիցս
առանց Փառաւորեալն. Եւ զկնի Սուրբ Աստուածին՝ Տէր ողորմեա։
Ելեն 'ի ծնկաց։

Բարձեր յուս քո ըզփայտ Խաչին,
Ի Գողգոթայ հաներ տեղին.
Յոր պատրանաց նախատեղծին,
Բարձեր զանէծըս մարդկային։

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւս″.
Թափօրականքն. Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ո″.

Թափօրապետն. Առաջի պատուական ամենա-
յաղթ Խաչի քո անկանիմք երկրպագելով.
և խնդրեմք զթողութիւն յանցանաց մե-
րոց. քանզի սովաւ բարձեր զդատապար-
տութիւն ազգի մարդկան։
Եւ այժմ վասն սրբոյ Աստուածային քո
Նշանի՝ շնորհեա՛ զերկնային զխաղաղու-
թիւնդ ամենայն աշխարհի։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն".
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ".

Եւ անտի իջանեն 'ի սուրբ Պատմանատեղն. ասելով

ԲՁ. Կուսածին մարմինդ Քրիստոս այսօր դնի 'ի կոյս գերեզմանի. եւ լուծիչն երկանց զծնողին մատանեաւ կնքի քահանայից:

Արթուն բնութեամբ արարիչն ամենեցուն այսօր ննջէ 'ի մէջ մահացելոց. որ պահէն զԻսրայէլ անքուն պահպանի 'ի զինուորացն:

Ցնծութիւն արարածոց Քրիստոս այսօր արտասուի որպէս մեռեալ 'ի տրտմազգեցեցն. և բարուրումն անմահութեան խընկի 'ի զգաստեցն Իւղաբերից:

Սարկաւագն. Որթի:
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութբ լուա".
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի:
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ:
Ասէ Աստուած:

Թափօրապետն. Վասն Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր՝ որ 'ի շաբաթն մտանէր, եկեալ Յովսէփ



որ յԱրեմաթեայն էր, այր պարկեշտ նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ. համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի:

Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարեւ այնչափ վաղ մեռաւ:

Եւ իբրեւ ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ:

Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և եդ 'ի գերեզմանի՝ զոր էր փորեալ 'ի վիմէ, և թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն գերեզմանին:

Իսկ Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ Յակովբեայ՝ և Յովսեայ՝ տեսին զտեղին ուր եդաւ:

Սարկաւագն. Փառք քեզ Տէր Աստուած մեր. Խնդրեսցուք".
Թափօրականքն. Կեցո՛ Տէր: Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".
Թափօրապետն. Քում՝ ամենազօր և հրաշալի Թաղմանդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագա". Տես յերես 6:

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն''.
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ''.

Եւ անդ երգեն ՚ի Սուրբ Գերեզմանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. աւետըզ՝

ԱԿ. Աքանչելի հրեշտակըն Տեառն ցընծութեամբ իջեալ ՚ի գերեզմանըն հարկանէր փող յարութեանըն Տեառն:

Ի հարկանել փողոյն պահապանքըն զարհուրեցան եւ եղեն ՚ի յահէն որպէս մեռեալ:

Ձայն եղեւ ՚ի հրեշտակէն բարբառ եղեւ ուրախութեան Տէր Յարեաւ. փառք Յարութեանըն Տեառն:

Դրօշըն փայլելով երեւեալ Յիսուս աշակերտացն եւ ասէր. խաղաղութիւն ընդ ձեզ:

(Այս Աւետարանս երբեմն ՚ի ներքս ՚ի Սուրբ Գերեզմանն ընթերցանի. և երբեմն առաջի դրան նորա):

Սարկաւագն. Որթի:
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութբ լուա''.
Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի:
Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ:
Ասէ Աստուած:



Թափօրապետն. Վասն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամն տեսանել զգերեզմանն:

Եւ ահա շարժումն մեծ եղեւ, զի Հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրանց անտի, և նստէր ՚ի վերայ նորա. և էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն:

Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրեւ զմեռեալս:

Պատասխանի ետ Հրեշտակն և ասէ ցկանայսն. Մի երկնչիք դուք, գիտեմ զի ըզՅիսուս զխաչելեալն խնդրէք. Չէ աստ, քանզի Յարեաւ՝ որպէս ասացն. Եկայք և տեսէք զտեղին՝ ուր կայր:

Թափօրականքն. Տէր ողորմեա. և Երգ,

Ինձ լսելի արա զհնչիւն,
Ձայն Յարութեան փողոյն վերջին.
Ի նոր եւ կոյս գերեզմանին,
Յարեար մարմնով քո կուսածին:

Սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով միաբանութե 'ի Տեա″.
Թափօրականքն. Կեցո՛ Տէր. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո″.
Թափօրապետն. Քում ամենազօր և հրաշալի Յարութեանդ Քրիստոս Աստուած մեր՝ երկիրպագ″. Տես յերես 6:

---

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն″.
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ″.

Եւ ապա շուրջ գալով զԳերեզմանաւ Տեառն. և գան 'ի վէմակն մեր 'ի Յուղաժամանման տեղին Սրբուհւոյ Աստուածածնին. ասեն՝

Սիովնի որդիք զուարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ. գայ պսակէ զքեզ փառօք եւ ընդ առաջ պճնեալ զարդուք. երգեա երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենաց պտղոյն:
Երեւեցար խընկաբերիցն յողջոյն կենացն ուրախալից. և 'ի լերինն Գալիլեայ Առաքելոց մետասանից. արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրըն վերջին. Եկայք փըրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սարկաւագն. Որթի:
Թափօրապետն. Խաղաղութիւն ամենեցուն:
Թափօրականքն. Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութե լուա″.



Թափօրապետն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:

Թափօրականքն. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ: Ասէ Աստուած:

Թափօրապետն. Ի ժամանակի Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէօպայ, և Մարիամ Մագդաղենացի:
Յիսուս իբրեւ ետես զմայրն և զաշակերտըն զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կի՛ն դու, ահա՛ որդի քո:
Ապա ասէ ցաշակերտն. Ահա՛ մայր քո: Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն ըզնա առ իւր:
Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ. Ծարաւի եմ:
Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. եւ նոցա սպունգ լցեալ քացախով ընդ եղեւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բերան նորա:
Իբրեւ էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղեաւն՝ ասէ. Ամենայն ինչ կատարեալ է:

# Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին:

Սարկաւագն. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր".

Թափօրականքն. Կեցո՛ Տէր: Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ո".

Թափօրապետն. Ընկալ Տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութ̃ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի Որդւոյ քո, և աղաչանօք ամենայն Սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ: Լո՛ւր մեզ Տէր, և ողորմեա. Ներեա քաւեա և թող զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեա՛լ եղերուք ՚ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթա՛յք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:

2763

<< Ազգային գրադարան
NL0029626

1896